ժէն խորութեամբ քանդում են և լուցկին վառում հորի մէջ։ Այս հրաքոտ կամ կրակոտ երկիրը Քրիստոսի 500 թուին (1393 տարի առաջ) Աղուանից Վաչագան թագաւորը, որ նստում էր Պարտաւ քաղաքում, տուել էր օժիտ իւր դուստր Վարսենիկին, որոյ ձմերոցը Բաղուն էր, իսկ ամարանոցը Շամախին, ինչպէս Մեսրովբ Թաղիադեանցից առնելով գրել եմ Շամախու բերդի համար, որ անուանւում է Գիւլիստան և Ղըզղալայ։

Ղեւոնդ պատմիչ վարդապետը (ԺԸ. 101. Ս. Պետերբուրգ 1887) գրէ.

«Զայնու ժամանակաւ (յամի Տեառն 6_5) դարձեալ ամբոխ յուզէր ի կողմանցն Հիւսիսոյ. քանզի մեռաւ արքայն Խազրաց, որում Խաքանն. կոչէին ապա մայր նորին Փարսբիթ Հրաման տայր Թարմազ զօրավարին զօր բազում գումարեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որք ելանէին ընդ աշխարհն Հոնաց և ընդ պահակն Ճորայ ընդ երկիրն Մազքթաց[1]) . . . աւերէին զԱրտաւէտ, զԳանձակ շահաստան և զգաւառն որ Ըշթի Բագուան կոչի (գուցէ Ա-թաշի Բագուան, որ է կրակապաշտութեան մեհեան) . . . Եւ ի դիմի հարան զօրքն Իսմայէլի, և Զառայ անուն ոմն զօրավար նոցա . . . որք և ասպատակելով, հասին ի գաւառն Զարեւանդ»,

Բաղու քաղաքը շինուած է Կասպից ծովի արեւմտեան եզերքին անյայտ ժամանակից, միայն Բաղու անունը յիշեցնում է նախնի Բագնեաց պաշտամունքը՝ զոր մատուցանում էին կրակապաշտ պարսից մոգերը և քրմերը ինքնաբուղխ կրակին, որ հրաբուխի նման միշտ մխում ու վառվում է Բաղուայ շրջապատումն Աւշերոնեան թերակղզոյ մէջ Սուրբխանի ասուած տեղումն[2])։

Բաղուն շինած է կէս բարձր և կէս տափարակ տեղում, և ունի առաջին խաղաղ և ապահով նաւահանգիստ, որի նաւերը գնում են դէպի արեւելք Անդրկասպեան աշխարհը և այնտեղից բերում են զանազան նիւթեր. զոր օրինակ՝ դեղեցիկ գործուած զորգեր, շալեր, մետաքսեայ գործուածներ, ընտիր ու անուշա-

---

[1]) Եսայի Կաթուղիկոս Աղուանից ասէ. «Մազքութք են Ափխազք»։

[2]) Սուրբխանու կրակապաշտների և նոցա տաճարի համար տես գրքս մէջ՝ Ս. եպիսկ. Ջալ. գրածը։